

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

_____ 2020 թվականի N ____-Ա

**«ԱՐՈՎՅԱՆԻ ՄՏԱՎՈՐ ԹԵՐԶԱՐԳԱՑՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵՒԱՆԵՐԻ N1 ՀԱՏՈՒԿ
(ՕԺԱՆԴԱԿ) ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ
ՎԵՐԱՆՎԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասը և «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 2014 թվականի դեկտեմբերի 1-ի ՀՕ-200-Ն օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է

1. «Աբովյանի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների N1 հատուկ (օժանդակ) դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (պետական գրանցման համարը՝ 11.210.02035) վերանվանել «Կոտայքի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն (այսուհետ՝ կազմակերպություն):

2. Սահմանել, որ կազմակերպությունը երկրորդ՝ տարածքային մակարդակում երեխայի կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ մատուցող կազմակերպություն է, որի՝

1) նպատակն իր սպասարկման տարածքի ուսումնական հաստատություններում սովորողների կրթության կազմակերպմանը և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ներառմանն աջակցելն է.

2) գործունեության առարկան կրթության կազմակերպման ոլորտում մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների մատուցումն է:

3. Թույլատրել կազմակերպությանն իրականացնել ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները՝

1) ուսումնական և մեթոդական գրականության մշակում և հրատարակում.

2) դիդակտիկ նյութերի և պարագաների ստեղծում.

3) մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների մատուցում 18-ից բարձր տարիք ունեցող (հանրակրթության մեջ չընդգրկված) անձանց.

4) փորձագետ-մասնագետների կողմից մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների մատուցում:

4. «Կոտայքի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կառավարման՝ «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ կետի «գ», «դ» «ե» և «է» ենթակետերով նախատեսված լիազորությունները վերապահել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը:

5. Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո՝

1) երկամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի հետ համատեղ ապահովել կազմակերպությանը սեփականության իրավունքով և անհատույց օգտագործման իրավունքով պատկանող գույքի, ինչպես նաև պարտավորությունների կազմի ճշտման գործընթացը, գույքի հանձնման-ընդունման աշխատանքների կատարումը.

2) երկամսյա ժամկետում հաստատել կազմակերպության կանոնադրությունը՝ նոր խմբագրությամբ:

6. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետին՝ ապահովել կազմակերպությունում սովորող աշակերտների հանրակրթական ծրագրով հետագա ուսումնառությունը:

7. Կազմակերպության անվանափոխության հետ կապված պետական գրանցման, կանոնադրության փոփոխության պետական գրանցման և կնիքի ձեռքբերման ծախսերը կատարել կազմակերպության միջոցների հաշվին:

8. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին՝ սույն որոշման 5-րդ կետի 2-րդ ենթակետում և 7-րդ կետում նշված աշխատանքների ավարտից հետո եռամսյա ժամկետում՝ «Կոտայքի

տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հետ կնքել «Աբովյանի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների N1 հատուկ (օժանդակ) դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության հետ 2006 թվականի մայիսի 19-ին կնքված անշարժ գույքի անհատույց օգտագործման N 8/006 անշարժ գույքի պայմանագրում սույն որոշման 1-ին կետում նշված անվանափոխման մասին համաձայնագիր (այսուհետ՝ համաձայնագիր)՝ սահմանելով, որ համաձայնագրի նոտարական վավերացման և համաձայնագրից ծագող գույքային իրավունքների պետական գրանցման ծախսերը ենթակա են իրականացման՝ «Կոտայքի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության միջոցների հաշվին:

ՏԵՂԵԿԱՆՔ - ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԱՐՈՎՅԱՆԻ ՄՏԱՎՈՐ ԹԵՐԱՐԳԱՑՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵՒԱՆԵՐԻ ՀԱՏՈՒԿ N1 (ՕԺԱՆԴԱԿ) ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱՆՎԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

«Արովյանի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների N1 հատուկ (օժանդակ) դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերանվանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը բխում է «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 2014 թվականի դեկտեմբերի 1-ի ՀՕ-200-Ն օրենքի 21-րդ հոդվածի պահանջներից, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի փետրվարի 18-ի N6 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրման գործողությունների պլանի կատարումն ապահովելու անհրաժեշտությունից:

2. Ընթացիկ իրավիճակը և կարգավորման նպատակը

ՀՀ Ազգային ժողովի կողմից 2014 թվականի դեկտեմբերի 1-ին ընդունվել է «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքը (ՀՕ-200-Ն), որով նախատեսվում է հանրակրթության համակարգում անցում կատարել համընդհանուր ներառական կրթության, կիրառելով երեխայի կրթական կարիքներին արձագանքման եռաստիճան համակարգ: Օրենքի կիրարկման արդյունքում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաները մանկավարժահոգեբանական աջակցություն կստանան 3 մակարդակում՝ հանրակրթական դպրոցում, ինչպես նաև տարածքային և հանրապետական մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների կողմից:

Օրենքով ամրագրվել է, որ հատուկ դպրոցները, պետք է վերակազմակերպվեն տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների, որոնք աջակցություն կտրամադրեն

հանրակրթական դպրոցներին, կազմակերպելու համար կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթությունը:

Տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնները, որպես երկրորդ մակարդակ, պետք է մատուցեն անձի կրթության աջակցության մանկավարժահոգեբանական ծառայություններ (կազմակերպում, համակարգում) և իրականացնեն անձի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատում:

2016 թվականի փետրվարի 18-ի նիստի N 6 արձանագրության 12-րդ կետով հավանության արժանացած «Համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրման գործողությունների պլանին և ժամանակացույցին հավանություն տալու մասին» արձանագրային որոշմամբ նախատեսված 35-րդ կետի նախատեսվում է 2020 թվականի ընթացքում Կոտայքի մարզում մեկ տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի հիմնադրում՝ (Աբովյանի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների N1 հատուկ (օժանդակ) դպրոցի վերակազմակերպման միջոցով): «Կոտայքի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը հիմնադրվում է «Աբովյանի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների N1 հատուկ (օժանդակ) դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերանվանելու միջոցով: Հատուկ դպրոցից սովորողների տեղափոխում հանրակրթական դպրոցներ, իսկ ներառական կրթական համակարգում չներառված երեխաների հետագա կրթությունը ապահովվելու է ՀՀ տարածքում գործող հատուկ դպրոցներում (ծնողի ընտրությամբ):

3. Ակնկալվող արդյունքը

Իրավական ակտի ընդունման արդյունքում տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների հիմնադրմամբ նախատեսվում է համընդհանուր ներառական կրթության, յուրաքանչյուր երեխայի կրթության առանձնահատուկ պայմանի կարիքի բացահայտման, գնահատման ու դրան համապատասխան կրթության կազմակերպման արդյունավետ մեխանիզմների ներդրում, ինչը կնպաստի կրթության ոլորտում սահմանված նպատակների իրականացմանը, մասնավորապես կապահովի

հավասարապես հասանելի, ներառական և որակյալ կրթություն բոլոր երեխաների համար:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԱՐՈՎՅԱՆԻ ՄՏԱՎՈՐ ԹԵՐԱՐԳԱՑՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵՒԱՆԵՐԻ N1 ՀԱՏՈՒԿ (ՕԺԱՆԴԱԿ) ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱՆՎԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ԲՅՈՒՋԵՌԻՍ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԷԱԿԱՆ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

«Արովյանի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների N1 հատուկ (օժանդակ) դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերանվանելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի բյուջեում ծախսերի և եկամուտների էականա վելացում կամ նվազեցում չի սպասվում:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ԱՐՈՎՅԱՆԻ ՄՏԱՎՈՐ ԹԵՐԱՐԳԱՑՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵՒԱՆԵՐԻ N1 ՀԱՏՈՒԿ (ՕԺԱՆԴԱԿ) ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱՆՎԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՐԱՏԵՍՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

| N/ N | Առարկության, առաջարկության հեղինակը, Գրության ստացման ամսաթիվը, գրության համարը | Առարկության, առաջարկության բովանդակությունը | Եզրակացու լ թյուն | Կատարված փոփոխու թյուն |
|---------|--|---|-------------------------|--|
| 1. | ՀՀ ֆինանսների նախարարություն 2020-04-30 N01/8-3/6325-2020 | Առաջարկում է Նախագծի 3-րդ կետով նախատեսվում է թույլատրել կազմակերպությանն իրականացնել ձեռնարկատիրական գործունեության մի շարք տեսակներ: Հիմք ընդունելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը և, հաշվի առնելով, որ պետական | Չի ընդունվում | 1.Որոշման նախագծում անհիմն կրկնություններ չի խուսափելու նպատակով առաջարկը չի ընդունվում, քանի որ շահույթի օգտագործումը կարգավորվում է ՀՀ կառավարության 13.10.2016 |

| | | | | |
|-----------|---|--|--------------------|--|
| | | <p>կազմակերպության շահույթի օգտագործման կարգը սահմանում է հիմնադիրը՝ առաջարկում ենք Նախագծում ներառել դրույթ, որով կսահմանվի, որ կազմակերպության ձեռնարկատիրական գործունեության ընթացքում առաջացած շահույթն օգտագործվելու է նրա կանոնադրությամբ նախատեսված նպատակների իրականացման համար:</p> <p>Միաժամանակ, առաջարկում ենք Նախագծի 7-րդ կետում «գրանցման» բառից հետո լրացնել «, կանոնադրության փոփոխության պետական գրանցման» բառերը:</p> | <p>Ընդունվել է</p> | <p>թվականի «ՀԱՆՐԱՊԵՏ ԱԿԱՆ ԵՎ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԱՆԿԱՎԱՐ ԺԱՀՈԳԵԲԱՆ ԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ Ը ԵՎ ՑԱՆԿԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N1058-Ն որոշմամբ հաստատված օրինակելի կանոնադրության 13-րդ կետով:</p> <p>Որոշման նախագծի 7-րդ կետում առաջարկին համապատասխան կատարվել է լրացում:</p> |
| <p>2.</p> | <p>ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն 2020-05-07 ՍՊ/15.3/11972-2020</p> | <p>Առաջարկում է Որոշման նախագծի 8-րդ կետում «Աբովյանի մտավոր թերզարգացում ունեցող</p> | <p>Ընդունվել է</p> | <p>Որոշման նախագծի 8-րդ կետում առաջարկին համապատաս</p> |

| | | | | |
|-----------|---|--|---|---|
| | <p>Պետական գույքի կառավարման կոմիտե</p> | <p>երեխաների N 1 հատուկ (օժանդակ) դպրոց» բառերը փախարհնել «Կոտայքի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» բառերով:</p> <p>Որոշման նախագծի 8-րդ կետում.</p> <p>1. «7-րդ» թվից առաջ լրացնել «5-րդ կետի 2-րդ ենթակետում և» թվերն ու բառերը,</p> <p>2. «Աբովյանի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների N 1 հատուկ (օժանդակ) դպրոց» բառերը փախարհնել «Կոտայքի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» բառերով,</p> <p>3. «անշարժ գույքի պայմանագրերում» բառերը փախարհնել «պայմանագրում» բառով:</p> | <p>1-3 առաջարկությունները ընդունվել է</p> | <p>խան կատարվել է փոփոխություն:</p> <p>Որոշման նախագծի 8-րդ կետում առաջարկությունների համապատասխան կատարվել է լրացումներ և փոփոխություններ:</p> |
| <p>4.</p> | <p>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն 2020թ.-04-28 ՁԲ/ԳԳ-2-3/15907-2020</p> | <p>Առարկություններ և առաջարկություններ չկան:</p> | | |

| | | | | |
|----|--|--|---|--|
| 5. | <p>ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտե 2020-04-27 ՍԹ/2344-2020</p> | <p>Առարկություններ և առաջարկություններ չկան:</p> | | |
| 4. | <p>ՀՀ Կոտայքի մարզպետարան 2020-04-28 01/06.1/02873-2020</p> | <p>Առարկություններ և առաջարկություններ չկան:</p> | | |
| | <p>ՀՀ Արդարադատության Նախարարություն 2020-06-01 01/27.1/11287-2020</p> | <p>Առաջարկում է</p> <p>1/ Նախագծի նախաբանում անհրաժեշտ է «օրենքի 21-րդ հոդվածը» բառերը փոխարինել «օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասը» բառերով՝ հաշվի առնելով, որ նախագիծն ուղղված է նախաբանում նշված օրենքի 21-րդ հոդվածի հենց 1-ին մասով նախատեսված գործողության իրականացմանը:</p> <p>2/ Նախագծի նախաբանում «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ կետը» բառերն անհրաժեշտ է փոխարինել «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասը» բառերով՝ ելնելով</p> | <p>1/ Ընդունվել է</p> <p>2/ Ընդունվել է</p> | <p>1/ Որոշման նախագծի նախաբանում առաջարկին համապատասխան կատարվել է փոփոխություն:</p> <p>2/ Որոշման նախագծի նախաբանում առաջարկին համապատասխան կատարվել է փոփոխություն :</p> |

| | | | | |
|--|--|--|--|--|
| | | «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի պահանջներից: | | |
|--|--|--|--|--|